

2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետվություն

Սույն հաշվետվությունը ներառում է ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված հիմնական աշխատանքները:

2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ամփոփվել են ընդհանուր առմամբ 9 ուսումնասիրությունների արդյունքներ, ավելի քան 80 մշտադիտարկումներ (որոնցից որոշ մասը հրապարակման ոչ ենթակա), ՀՀ կառավարությանն են ներկայացվել մի շարք առաջարկություններ ՀՀ օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ: Ամփոփված տեղեկանքները որոշ դեպքերում ուղարկվել են իրավապահ մարմիններին, կան հարուցված քրեական գործեր:

Ուսումնասիրությունների և մշտադիտարկումների արդյունքում կազմված տեղեկանքների հիման վրա մի շարք դեպքերում, իրավապահ մարմինների քննչական գործողությունների արդյունքում պետական բյուջե է վերականգնվել պատճառված վնասի չափով գումարը:

Ամփոփվում են ուսումնասիրությունները «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ում և ՀՀ պետական եկամուտների կոմիտեում, ՀՀ պաշտպանության նախարարության «Զինամ» ՓԲԸ-ում:

Ընթացքի մեջ են «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ում, «Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ում իրականացված ուսումնասիրությունները, ինչպես նաև մի շարք մշտադիտարկումներ:

Ուսումնասիրություններն ու մշտադիտարկումներն իրականացվել են ռիսկերի վեր հանման և գնահատման, ՀՀ վարչապետի հանձնարարականների, քաղաքացիների դիմում-բողոքների և մամուլի հրապարակումների հիման վրա:

Մշտադիտարկվում է համավարակի դեմ տարվող աշխատանքներում ներգրավված բոլոր պետական մարմինների կողմից իրականացվող միջոցառումները (վարակակիրների հայտնաբերում, մեկուսացում, ինքնամեկուսացում, թեստավորում, հոսպիտալացում, իրազեկում, արտահիվանդանոցային և հիվանդանոցային բուժում, պարետի որոշումների պահպանման նկատմամբ վերահսկողություն):

Հաշվետու ժամանակահատվածում Ծառայությունում մուտքագրվել են 1303 փաստաթղթեր, որից՝ 270-ը քաղաքացիների դիմում-բողոքներ և տարբեր գերատեսչություններից ու կազմակերպություններից ստացված 1033 գրություններ:

Էլեկտրոնային եղանակով ստացվել են թվով 30 տեղեկատվական հարցումներ (4-ը՝ քաղաքացու կողմից, 4-ը՝ հասարակական կազմակերպությունից, 20-ը՝ լրագրողից, 1-ական պետական և մասնավոր կազմակերպությունից, 1-ը՝ փաստաբանի կողմից), ինչպես նաև ստացվել են 34 բանավոր հարցումներ լրատվամիջոցների կողմից:

Հասցեագրված դիմումներից 247-ի մասով աշխատանքներն իրականացվել են դիմումների և քաղաքացիների ընդունելության բաժնի գործառույթների շրջանակներում:

«Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետերի համաձայն պետական կառավարման համակարգի ու տեղական ինքնակառավարման իրավասու մարմիններին հասցեագրվել են թվով 89 դիմումներ, որոնց նկատմամբ սահմանվել է հսկողություն և պատրաստվել 102 հանձնարարական:

Կատարվել է 95 քաղաքացիների ընդունելություն, որոնց ընթացքում տրվել են բանավոր պարզաբանումներ՝ վերջիններիս կողմից ներկայացրած խնդիրների վերաբերյալ:

Պաշտոնապես գործող տեղեկատու հեռախոսահամարի միջոցով 265 քաղաքացիների տրվել են անհրաժեշտ պարզաբանումներ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԵՐ

ՀՀ ոստիկանությունում իրականացվել է թվով երրորդ ուսումնասիրությունը:

Ուսումնասիրության տիրույթում ընդգրկվել են 2014-2019 թվականների ընթացքում ՀՀ ոստիկանության կարիքների համար շինարարական աշխատանքների իրականացման, հանդերձանքի ձեռքբերման համար կազմակերպված գնման ընթացակարգերի, ինչպես նաև «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից վարչական վարույթի ընթացքում կարճված գործերի և բեկանված որոշումների նկատմամբ օրինականության և արդյունավետության, ինչպես նաև մի շարք այլ գործառույթների նկատմամբ վերահսկողության հատվածները:

Շինարարության ասպարեզում արձանագրվել են օրենսդրությամբ սահմանված չափորոշիչների համեմատ շուրջ 538 մլն դրամի չափով ավել նախահաշվային փաստաթղթերի կազմման, շուրջ 48 մլն դրամի չափով վճարված, սակայն չիրականացված աշխատանքների, շուրջ 51 մլն դրամի չափով իրականացված, սակայն հաստատված նախագծերից չբխող և չհիմնավորված ծախսերի, շուրջ 107 մլն դրամի չափով հօգուտ պետական շահի չգանձված տույժի, ինչպես նաև միևնույն աշխատանքի դիմաց շուրջ 6 մլն դրամի չափով կրկնակի վճարման դրսևորումներ: Հանդերձանքի ձեռքբերման հատվածում արձանագրվել են պետության օրինական շահերին հասցված շուրջ 735 մլն դրամի հնարավոր վնասի ռիսկային դեպքեր, բացի այդ՝ 2014-2019 թվականների ընթացքում, ուժը կորցրած իրավական ակտի հիման վրա, անհատական պատվերների միջոցով, իրականացված շուրջ 300 մլն ՀՀ դրամի չափով հանդերձանքի ձեռքբերման դեպքեր՝ միևնույն կազմակերպությունից:

Արձանագրվել են նաև ՀՀ ոստիկանության զորքերում համապատասխան հրամաններով սահմանված աշխատանքային պարտականությունները չկատարող աշխատակիցներին շուրջ 54 մլն դրամի չափով աշխատավարձի վճարման դեպքեր: ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից ՀՀ ոստիկանության զորքերում իրականացված մշտադիտարկման արդյունքներով պարզվել է, որ 2007-2011թթ. ընթացքում զինծառայության հետ որևէ առնչություն չունեցող մի շարք անձինք ՀՀ ոստիկանության զորքերում զբաղեցրել են պաշտոններ և ունեցել են

կոչումներ: Մի շարք այլ աշխատակիցներ չեն կատարել սահմանված կարգով իրենց վերապահված աշխատանքային պարտականությունները, փոխարենն իրականացրել են ՀՀ ոստիկանության զորքերի զորամասերի թեյարանների աշխատանքների կազմակերպումը: Նշված աշխատակիցները ստացել են աշխատավարձ՝ չիրականացնելով համապատասխան հրամաններով սահմանված աշխատանքային պարտականությունները, որի արդյունքում պետական բյուջեի միջոցներից իրականացվել են շուրջ 54 մլն դրամի անարդյունավետ ծախսեր: Բացի այդ՝ խախտումներ են արձանագրվել ՀՀ ոստիկանության զորքերի կողմից կազմակերպված մի շարք գնման գործընթացներում: Տեղեկանքն ուղարկվել է ՀՀ դատախազություն:

□ Իրականացվել է ուսումնասիրություն ՀՀ պաշտպանության նախարարությունում: Մասնավորապես՝ ուսումնասիրություն է իրականացվել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար գինվորական և ծառայողական բնութագրերով կոշիկների և կիսաճտքավոր կոշիկների գնման գործընթացների նկատմամբ՝ օրինականության և արդյունավետության վերահսկողության նպատակով: Ուսումնասիրությամբ դիտարկվել են նաև երկու մատակարար կազմակերպությունների կողմից ՀՀ Վարչապետին ուղղված դիմում-բողոքներով բարձրաձայնված հարցերը: Ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են գնման գործընթացներին վերաբերվող խախտումներ (գնման առարկայի տեխնիկական բնութագրերի, պլանավորման, գնման ձևերի ընտրության, մատակարարման, մատակարարված ապրանքների տեխնիկական բնութագրերին համապատասխանության և այլ հանգամանքների հետ կապված): Ուսումնասիրության արդյունքում կազմվել է տեղեկանք, որը ներկայացվել է ՀՀ Վարչապետին: Տեղեկանքն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե՝ քրեաիրավական գնահատական տալու նպատակով: Հարուցվել է քրեական գործ:

ՀՀ պաշտպանության նախարարությունում իրականացվել է 2012-2019թթ-ի վառելանյութի ձեռքբերման գնման գործընթացի օրինականության, շվաքարանների և վառելիքի կորուստների ուսումնասիրություն, որի արդյունքում արձանագրվել են շուրջ 395 մլն դրամի խախտումներ: Մասնավորապես՝

- գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ նախահաշվային արժեքներից բարձր գներով կնքված պայմանագրերի արդյունքում կատարվել է ընդհանուր շուրջ 302 մլն դրամի չհիմնավորված ավել ծախս,

- գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջի խախտմամբ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հաղթող ճանաչելու փոխարեն հաղթող մասնակից է ճանաչվել ավելի բարձր գնառաջարկ ներկայացրած մասնակիցը և կնքվել է պայմանագիր, որի արդյունքում կատարվել է ընդհանուր շուրջ 3.9 մլն դրամի ավել ծախս,

- ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 20-ի N 912-Ն որոշման համաձայն «ՌԱԻՆ ԲՈՈԻ» ընկերության հետ ժամանակին ցածր գնով պայմանագիր կնքելու փոխարեն «Ֆլեշ» ՍՊ ընկերության հետ բարձր գնով պայմանագրեր կնքելու արդյունքում կատարվել է շուրջ 66 մլն դրամի ավել ծախս,

- «Ֆլեշ» ՍՊ ընկերության կողմից մատակարարված ձմեռային դիզելային վառելիքը ընդհանուր 1000 տոննա քանակով համաձայն հավատարմագրված լաբորատորիայի կողմից տրամադրված եզրակացության չի համապատասխանել պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին, և պայմանագրի 6.3-րդ կետի համաձայն պետք է հաշվարկվեր տուգանք՝ շուրջ 23 մլն դրամի չափով և չընդունվեր, ինչը ՀՀ ՊՆ կողմից չի իրականացվել:

Արձանագրվել են նաև պետական գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների նկատմամբ ընթացակարգային բնույթի մի շարք խախտումներ:

Ուսումնասիրության արդյունքում կազմված տեղեկանքի վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված կարծիքը ամփոփվել է, արդյունքում կազմվել է ամփոփաթեթ, որը տեղեկանքի հետ միասին ուղարկվել է ՀՀ վարչապետին:

Տեղեկանք ուղարկվել է ՀՀ դատախազություն, որն էլ այն ուղարկել է ՀՀ քննչական կոմիտե:

Իրականացվել է ուսումնասիրություն «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ Հիմնադրամ): Արձանագրվել են մի շարք խախտումներ: Մասնավորապես՝

ա. երկու գնման գործընթացներում հաղթող ճանաչված ընկերությունների կողմից ներկայացվել են առերևույթ կեղծ, գործընթացում հաղթող ճանաչվելու իրավունք վերապահող փաստաթղթեր, որի արդյունքում ընկերությունների հետ կնքվել է շուրջ 127 մլն դրամի պայմանագրեր:

Մեկ ընկերության կողմից մատուցված ծառայության ծավալների և վերջինիս աշխատանքային ռեսուրսների միջև արձանագրվել է խիստ քանակական անհամապատասխանություն:

բ. Առկա են հիմնավոր կասկածներ փաստացի աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու, սակայն չգրանցված աշխատողներով ծառայություն մատուցելու վերաբերյալ, որի արդյունքում ՀՀ պետական բյուջե չի վճարվել շուրջ 14 մլն դրամ եկամտային հարկ:

գ. Ծառայություն մատուցող ընկերության կողմից մատուցել է տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն, սակայն Հիմնադրամի կողմից չի գանձվել պայմանագրով սահմանված 3 մլն դրամի տուգանք:

դ. Հիմնադրամին մատակարարված հեռուստացույցների մի մասը չի համապատասխանել պայմանագրի տեխնիկական բնութագրին, սակայն ընդունվել է Հիմնադրամի կողմից: Հեռուստացույցների մատակարարման գինը շուրջ կրկնակի անգամ գերազանցել է ձեռքբերման արժեքին, սակայն գնման գործընթացում խախտումներ չեն հայտնաբերվել:

ե. Օտարերկրյա իրավաբանական անձին փոխանցվել է 13 մլն դրամով ավելի գումար (ավելացված արժեքի հարկ), քան վերջինիս գնային առաջարկն էր:

գ. Հիմնադրամում լրացուցիչ աշխատավարձը հաշվարկվել է (հավելավճար, լրավճար և պարգևատրում) առանց ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածով սահմանված կարգեր, դեպքեր և չափեր նախատեսող իրավական ակտեր սահմանելու: Այնուամենայնիվ, լրացուցիչ աշխատավարձի անհամաչափ և սուբյեկտիվ հատկացումներ չեն արձանագրվել:

Է. Հիմնադրամի կողմից հիմնադրված ընկերությանը անհատույց հատկացվել է պետական սեփականություն հանդիսացող տարածքներ, շուրջ 100 մլն դրամի համախառն հաշվեկշռային արժեքով գույք, 60 մլն դրամի փոխառություն, սակայն ոչ արդյունավետ կառավարման և Հիմնադրամի կողմից ընկերության գործունեության նկատմամբ պատշաճ հսկողության բացակայության արդյունքում ընկերությունը կրել է վնասներ և շահաբաժիններ չի հաշվեգրվել Հիմնադրամի բյուջե: Բացի այդ, ընկերության կողմից իրականացվել է 47 մլն դրամի (դրամարկղային) Հիմնադրամի կանոնադրական նպատակներին չհամապատասխանող ծախս: Հիմնադրված ընկերության գործունեության ուսումնասիրության արդյունքում ի հայտ է եկել ևս մեկ հանգամանք, որը հետագա հավանական նախաքննության շահերից ելնելով, չի հրապարկվել և չի ներկայացվել վերահսկվող օբյեկտին:

Ուսումնասիրության արդյունքում կազմված տեղեկանքն ուղարկվել է ՀՀ դատախազություն՝ իրավական գնահատական տալու նպատակով: Հարուցվել է քրեական գործ:

Իրականացվել է ՀՀ-ում ներդրումների խթանման ոլորտում կառավարության քաղաքականության

Իրականացման գործառնությունների օրինականության և արդյունավետության ուսումնասիրություն, որի շրջանակներում կազմվել է տեղեկանք և ուղարկվել ՀՀ վարչապետի աշխատակազմ: Տեղեկանքում ներկայացվել է իրագործվող ներդրումային ծրագրերի ժամանակացույցը, ոչ իրատեսական ներդրումային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն:

Ուսումնասիրության ընթացքում որոշ ներդրումային ծրագրերում առկա խնդիրները լուծում են ստացել և ծրագրերն անցել են իրականացման փուլ: Տեղեկանքում նշվել են խնդրահարույց ծրագրերում առկա անհամապատասխանությունները, կոնկրետ պատասխանատուները, յուրաքանչյուր ծրագրի վերաբերյալ տրվել են բարելավման առաջարկություններ, ինչպես նաև՝ այնպիսի առաջարկություններ, որոնք վերաբերում են ՀՀ ներդրումային քաղաքականության մեջ համակարգային փոփոխությունների իրականացման անհրաժեշտությանը: Կազմված տեղեկանքի առանձին հատվածներ ուղարկվել են գործընթացում ներգրավված համապատասխան գերատեսչությունները և տեղական ինքնակառավարման մարմինները՝ քննարկելու և առաջարկություններով հանդես գալու նպատակով:

Իրականացվել է ուսումնասիրություն «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում:

Արձանագրվել են մի շարք խախտումներ: Մասնավորապես՝

ա. ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգի նվազագույն չափորոշիչներից պակաս քանակներով սննդամթերքի և հագուստի հատկացում շահառուներին,

բ. սանիտարական նորմերի խախտումներ,

գ. Լրացուցիչ աշխատավարձի անհամաչափ բաշխում:

Ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են ՀՀ վարչապետին, ինչպես նաև ուղարկվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

Նախարարությանը ներկայացվել են առաջարկություններ՝ ուսումնասիրությունից բխող գործողություններ կատարելու վերաբերյալ, ինչպես նաև միջնորդություն է ներկայացվել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին:

Իրականացվել է ուսումնասիրություն «Հայաերոնավիգացիա» ՓԲԸ-ում (այսուհետ՝ Ընկերություն):

Արդյունքում արձանագրվել են 613 մլն դրամի վնաս և (կամ) հնարավոր լրացուցիչ եկամուտների կորուստ մի շարք խախտումների և թերացումների հետևանքով, ինչպես նաև Ընկերության առաջարկվել է այլ հիմնադրամներում առկա 1.2 մլրդ դրամը փոխանցել ՀՀ պետական բյուջե, ինչը 2020 թվականի մայիսի 5-ին իրականացվել է Ընկերության կողմից:

Ուսումնասիրության արդյունքներն ամփոփող տեղեկանքում մասնավորապես արձանագրվել է, որ

- Ընկերության գործադիր մարմնի կողմից «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով սահմանված՝ պահուստային հիմնադրամին առնչվող իմպերատիվ դրույթների խախտման հետևանքով Ընկերությունը չի ունեցել առնվազն 257 մլն դրամի հնարավոր լրացուցիչ եկամուտներ,
- Ընկերության գործադիր մարմինը, չիրականացնելով իրեն վերապահված լիազորությունները, «Էյր Արմենիա» ՓԲԸ նկատմամբ կուտակել և Ընկերությանը պատճառել է շուրջ 180 մլն դրամի դեբիտորական պարտքի չափով վնաս,
- Ընկերությունը չպահպանելով աշխատանքային օրենսդրությունը և ներքին իրավական ակտերը՝ ունեցել է սահմանված հաստիքների քանակից ավել աշխատողներ, որոնց մասով վճարված աշխատավարձերի նվազագույն գումարը, հետևաբար նաև Ընկերությանը պատճառված վնասը, կազմել է շուրջ 108 մլն դրամ,
- Ընկերությանը վնաս է պատճառվել նաև շուրջ վճարված աշխատավարձերի մասով՝ 55 մլն դրամի չափով. թվով 7 անձնինք ստացել են աշխատավարձ՝ միաժամանակ աշխատելով նաև ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեում,
- 2013-2019 թվականներին արտասահմանյան գործուղումների հատուցման նպատակով հաշվարկվել և Ընկերության միջոցներից ելքագրվել է շուրջ 3.2 մլն դրամ գումար Ընկերության թվով 7 աշխատողների անունով, որոնք տվյալ օրերին չեն գտնվել գործուղման մեջ,
- 2017-2019 թվականներին երկարաժամկետ գործուղման մեջ գտնվող Ընկերության թվով 5 աշխատողի վճարվել է շուրջ 7.4 մլն դրամի գումարի չափով պարգևատրում:

Տեղեկանքը ուղարկվել է ՀՀ դատախազություն՝ տեղեկանքում առկա հանգամանքներին իրավական գնահատական տալու նպատակով: Հարուցվել է

քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով (պաշտոնեական դիրքն օգտագործելով խոշոր չափերով յուրացում կան վատնում կատարելու), 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (առանձնապես խոշոր չափերով յուրացում կան վատնում կատարելու) և 308-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ) նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է քրեական գործ, որի նախաքննության կատարումը հանձնարարվել է ՀՀ քննչական կոմիտեին:

Իրականացվել է ուսումնասիրություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Հայաստանի պետական ֆիլիարմոնիկ նվագախումբ» և «Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ների՝ 2015-2016 թվականների ընթացքում դահլիճների վերազինման աշխատանքների կատարման շրջանակներում պետական միջոցների կառավարման արդյունավետության և օրինականության, ինչպես նաև ՀՀ կառավարության՝ 2012թ. հուլիսի 26-ի N 1052-Ա որոշման (Երևանի Եզնիկ Կողբացի փողոցի N 36 հասցեում «ԳՐԶԻ ԱՇԽԱՐՀ» բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման ներդրումային ծրագրի մասին) կատարման նկատմամբ ուսումնասիրության արդյունքները:

Ընդհանուր առմամբ, ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է մոտ 188 միլիոն դրամի խախտում: Մասնավորապես՝

ա. ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Հայաստանի պետական ֆիլիարմոնիկ նվագախումբ» և «Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ների՝ դահլիճների վերազինման նպատակով ՀՀ մշակույթի նախարարության գործարքի կողմ հանդիպակաց կոնսորցիումի անդամ է դարձել ՀՀ մշակույթի նախարարության հետ փոխկապակցված, միայն դահլիճների վերազինման նպատակով ստեղծված և հետագայում գործունեություն ծավալած հայաստանյան ընկերությունը, որի միակ եկամտի աղբյուրը ձևավորվել է Նախարարության հետ կնքված գործարքների արդյունքում: Ընկերությունն իրականացրել է շուրջ 503 մլն դրամի աշխատանքներ: Նշենք, որ կոնսորցիումը բաղկացած է եղել 2 գերմանական, 1 ավստրիական և 1 հայկական ընկերություններից: Հաշվի առնելով փոխկապակցվածության և ոչ մրցակցային գնման ընթացակարգի արդյունքում ընկերության ընտրության հանգամանքը, իրականացվել է գործարքի գնի ուռճացվածության և հիմնավորվածության ուսումնասիրություն: Արդյունքում ի հայտ են եկել հիմնավոր կասկածներ առ այն, որ հայաստանյան ընկերությունը, որտեղ իրականացվել է հանդիպակաց ուսումնասիրություն «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, գործարքի արդյունքում իրական շահույթը թաքցնելու նպատակով փոխկապակցված անձանց հետ կնքել է կեղծ գործարքներ և ստացել շուրջ 82 միլիոն դրամի անապրանք փաստաթղթեր:

բ. ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 26-ի «Երևանի Եզնիկ Կողբացու փողոցի 36 հասցեում «Գրքի աշխարհ» բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման ներդրումային ծրագրի մասին» N 1052-Ա որոշման նախագծով ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացված հարցը պարունակել է պետական սեփականություն

հանդիսացող հողամասի շուկայական արժեքի գնահատման և դրա դիմաց մասնավոր ընկերության կողմից իրականացման ենթակա աշխատանքների արժեքի վերաբերյալ անարժանահավատ և չհիմնավորված տեղեկատվություն:

2012թ. հուլիսի 26-ին Երևանի քաղաքապետի ներկայացրած նախագծի հիման վրա ՀՀ կառավարությունն ընդունել է որոշում Երևանի Եզնիկ Կողբացու փողոցի 36 հասցեում «Գրքի աշխարհ» բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման ներդրումային ծրագրի մասին: Համաձայն դրա՝ N ՍՊԸ-ն առաջարկել է հայ գրատպության 500-ամյակի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երևանը 2012թ. գրքի համաշխարհային մայրաքաղաք ճանաչվելու կապակցությամբ կառուցել «Գրքի աշխարհ» բազմաֆունկցիոնալ համալիր և պատրաստ է իր միջոցների հաշվին այդ հասցեում գտնվող հողամասում, Երևանի Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոցի համար շինարարական կապալի պայմանագրին համապատասխան, կառուցել նոր կաթսայատուն, դպրոցի՝ Եզնիկ Կողբացու և Պուշկինի փողոցների անկյունային մասնաշենքի վրա՝ 288 քառ. մետր մակերեսով վերնահարկ՝ որպես համերգային դահլիճ:

Այդ որոշմամբ դպրոցին ամրացված գույքի կազմից հետ է վերցվել՝ Եզնիկ Կողբացու փողոցի N 36 հասցեում գտնվող հողամասից՝ 300 քառ. մետր մակերեսով հողամասը, 35.3 քառ. մետր մակերեսով կաթսայատունը և նշված աշխատանքների համար, որպես վճարման միջոց, սեփականության իրավունքով փոխանցվել է ՍՊԸ-ին:

Կաթսայատան և վերնահարկի շինաշխատանքների նախահաշիվը, համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի, կազմում է 102 մլն դրամ, իսկ նշված 300 քառ. մետր մակերեսով հողամասի և 35.3 քառ. մետր մակերեսով կաթսայատան շուկայական արժեքը 2012թ. հուլիսի 23-ի դրությամբ կազմում է 100 մլն դրամ:

Կաթսայատան և վերնահարկի աշխատանքների իրականացման պարտավորություններն ապահովելու նպատակով կնքվել է գրավի պայմանագիր՝ որպես գրավի առարկա նախատեսելով նշված գույքերը:

ՀՀ մշակույթի նախարարության և ընկերության միջև կնքված գլխավոր կապալի պայմանագրով շինարարության ավարտի ժամկետ է սահմանվել 2,5 տարին, իսկ կապալի պայմանագրով նախատեսված աշխատանքների որակի նկատմամբ հսկողության իրականացումը դրվել է նախարարության վրա: Պարզվել է սակայն, որ նշված համալիրը մինչ օրս չի կառուցվել, ՀՀ կառավարության նշված որոշմամբ չի սահմանվել համալիրի կառուցման նկատմամբ հսկողության պարտավորություն և ժամկետ, պետական սեփականություն հանդիսացող նշված հողամասի և կաթսայատան շուկայական գնահատում չի իրականացվել և շինաշխատանքների նախահաշիվ ու նախագծանախահաշվային փաստաթղթեր չեն կազմվել: Պարզվել է նաև, որ ՍՊԸ-ն, դառնալով պետական սեփականություն հանդիսացող նշված 335.3 քառ. մետր մակերեսով հողամասի սեփականատեր և իր ակտիվում ունենալով միայն նշված հողամասը, 2016թ. սեպտեմբերին օտարվել է 160 մլն. դրամով, իսկ 2019թ. մարտ ամսին հողամասը գրավադրվել է բանկում՝ գնահատվելով 194 մլն դրամ: Այսինքն՝ ՀՀ կառավարության 26.07.2012թ. թիվ 1052-Ա որոշման մեջ ներառվել են պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի շուկայական արժեքի, ինչպես նաև՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի

կազմման և շինաշխատանքների արժեքի վերաբերյալ առերևույթ կեղծ տվյալներ: Բացի այդ, 2015թ.՝ հունիսին փոփոխվել է ՀՀ կառավարության 26.07.2012թ. թիվ 1052-Ա որոշումը և սահմանվել է, որ «Երևանի Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոց» ՊՈԱԿ-ի համար նախատեսված շինաշխատանքների փոխարեն ՍՊԸ-ն պետք է ձեռք բերի շուրջ 82 մլն դրամ արժեքով երաժշտական գործիքներ, իսկ ձեռքբերվող երաժշտական գործիքների որակի նկատմամբ հսկողությունը դրվել է ՀՀ մշակույթի նախարարության վրա: 2016թ. մայիսի 12-ին կազմված հանձնման-ընդունման արձանագրությամբ ընդունվել են շուրջ 83 մլն դրամ արժեքով երաժշտական գործիքները: Սակայն ՀՀ ՊՎԾ աշխատակիցների նախաձեռնած փորձաքննությամբ պարզվել է, որ դրանից ՀՀ մշակույթի նախարարությանը հանձնված 47 մլն դրամ արժեքով (առանց ԱԱՀ) 10 ջութակների և 2 ալտերի իրական շուկայական արժեքը կազմում է 22 մլն դրամ: Այսինքն ՀՀ մշակույթի նախարարության պատասխանատու պաշտոնատար անձինք ՍՊԸ-ի ներկայացուցչի օժանդակությամբ կազմված հանձնման-ընդունման արձանագրության մեջ ներառել են մատակարարված երաժշտական գործիքների իրական արժեքի վերաբերյալ կեղծ տվյալներ՝ պաշտոնական դիրքն օգտագործելով վատնման եղանակով առերևույթ հափշտակելով շուրջ 24 մլն դրամ առանձնապես խոշոր չափերի պետական միջոցներ: Ուսումնասիրությամբ ի հայտ են բերված փաստերի առթիվ ՀՀ դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի (յուրացում և վատնում առանձնապես խոշոր չափերով) և 308-րդ հոդվածի 2-րդ մասի (պաշտոնական լիազորությունները չարաշահելը, որն անգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ) հատկանիշներով: Նախաքննություն կատարելու հանձնարարությամբ քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Իրականացվել է մշտադիտարկում «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ում (Երևանի բուսաբանական այգի)՝ վարձակալությամբ տրամադրված հողատարածքների օրինականության վերաբերյալ: Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել են մի շարք խախտումներ, մասնավորապես՝

- «ԶԵԹՐԻՆ ԳՐՈՒՊ» և «ԼԵՎՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունները, խախտելով ՀՀ հողային օրենսգրքի պահանջները, վարձակալված հողամասերն օգտագործել են (ընկերություններից մեկը ներկայումս էլ շարունակում է օգտագործել) գործառնական նշանակությունից տարբերվող՝ մրգերի և բանջարեղենի մանրածախ առևտրի և շինանյութի առուվաճառքի գործունեություն իրականացնելու նպատակներով, այնինչ՝ հիշյալ հողատարածքները պարտավոր էին օգտագործել բացառապես «բուսաբանական այգի կազմակերպելու» նպատակով: Խախտվել են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջները՝ հիշյալ դեպքերով առանց նոտարական վավերացման և պետական գրանցման պայմանագրեր են կնքվել,

- «ԶԵԹՐԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը տրամադրված տարածքի վարձակալության գինը շուրջ 11 մլն դրամի չափով պակաս է հաշվարկվել և գանձվել՝ չպահպանելով

ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված կարգով հաշվարկված վարձավճարի չափերը,

- առանց օրենքով սահմանված կարգով շինարարության թույլտվության առկայության վարձակալված տարածքում «ԶԵԹՐԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից իրականացվել են ինքնակամ պարսպի կառուցապատման աշխատանքներ:

Մշտադիտարկման արդյունքում կազմված տեղեկանքն ուղարկվել է ՀՀ դատախազություն: Հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով (պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին): ՀՀ պետական վերահսկողական ծառայության գրության հիման վրա Երևանի քաղաքապետի 2020թ. մայիսի 20-ի որոշմամբ էլ վերոնշյալ ինքնակամ կառույցները քանդվել են:

ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա իրականացվել է մշտադիտարկում՝ պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալությամբ տրամադրելու, այնուհետև դրանք հեռահաղորդակցության կապի օպերատորներին ենթավարձակալությամբ տրամադրելու 55 դեպքերի վերաբերյալ: Մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ, պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը բազմաթիվ դեպքերում համայնքների ղեկավարների կողմից նախ վարձակալությամբ են տրամադրվել բավականին ցածր վարձավճարով, ապա ավելի ուշ (որոշ դեպքերում հաջորդող կամ մի քանի օրերի ընթացքում)՝ վարձակալը հեռահաղորդակցության կապի օպերատորներին այդ գույքը (կամ դրա մի փոքր մասը) ենթավարձակալության է հանձնել մի քանի տասնյակ կամ հարյուր անգամ ավելի թանկ վարձավճարով: Մասնավորապես համայնքներից մեկում համայնքի սեփականություն հանդիսացող 1.200 քմ հողամասը վարձակալության է հանձնվել տարեկան 2.000 դրամով, իսկ այդ հողամասի 200 քմ-ը հեռահաղորդակցության կապի օպերատորին ենթավարձակալության է տրվել շուրջ 500 անգամ թանկ գնով՝ տարեկան 1.020.000 դրամ վարձավճարով կամ 10.000 քմ հողատարածքը տրամադրվել է տարեկան 4.540 դրամ վարձավճարի դիմաց և նույն օրն այն տրվել է ենթավարձակալության շուրջ 100 անգամ թանկ գնով՝ տարեկան 480.000 դրամով: Հատկանշական է այն հանգամանքը, որ ուսումնասիրված գործարքների մի մասում, ըստ էության, առկա է ուղղակի փոխկապակցվածություն վարձատուի՝ համայնքի ղեկավարի և վարձակալի միջև: Մասնավորապես, առկա են դեպքեր, երբ համայնքից վարձակալված հողամասերի վարձակալները հանդիսանում են համայնքների ղեկավարների ընտանիքի անդամները, հաշվառված են միևնույն հասցեում կամ գտնվում են բարեկամական, ազգակցական կապերի մեջ: Մշտադիտարկման արդյունքում կազմված տեղեկանքն ուղարկվել է ՀՀ դատախազություն: Հարուցվել են քրեական գործեր: Մի շարք համայնքների դեպքում պատճառված վնասի չափով գումարը վերականգնվել է:

իրականացվել է մշտադիտարկում **«Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման» հիմնադրամում**: Արդյունքում պարզվել է հետևյալը՝

- Հիմնադրամը խախտելով Ուղեցույցի «Դ.3.» գլխի 33-րդ կետի պահանջը՝ «Եղեգնաձորի պահածոների գործարան» ՓԲ ընկերությանը տրամադրել է 35 մլն դրամ նախաներդրումային (միջանկյալ) ֆինանսավորում՝ չունենալով անշարժ գույքի և/կամ հիմնական միջոցի գրավ:
- Խախտելով պայմանագրի պահանջները՝ 35 մլն դրամ նախաներդրումային (միջանկյալ) ֆինանսավորման գումարը մարվել է «Եղեգնաձորի պահածոների գործարան» ՓԲ ընկերությանը բաժնեմասնակցային ներդրմամբ տրամադրված 240 մլն դրամ գումարից:
- Հիմնադրամի կողմից չի իրականացվել ծախսերի պատշաճ վերահսկողություն, որի արդյունքում 23.04.2018 թվականին «Եղեգնաձորի պահածոների գործարան» ՓԲ ընկերությանը տրամադրված 360 մլն դրամ բաժնեմասնակցային ներդրման և փոխառության գումարներից առնվազն շուրջ 193 մլն դրամը չի ծախսվել պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան:
- «Գոֆրոլայն» ՓԲ ընկերության հետ բաժնեմասնակցային ներդրման պայմանագիր կնքելու փոխարեն Հիմնադրամին պետք է վերադարձվեր նախաներդրումային (միջանկյալ) ֆինանսավորման պայմանագրով հատկացված 190,8 մլն դրամը:
- «Գոֆրոլայն» ՓԲ ընկերությանը տրամադրվել է շուրջ 89 մլն դրամ նախաներդրումային (միջանկյալ) ֆինանսավորում՝ խախտելով Ուղեցույցի «Դ.» գլխի 15-րդ կետի պահանջները:
- «Ագրոլոգ» ՓԲ ընկերությանը տրամադրվել է նախաներդրումային (միջանկյալ) ֆինանսավորում 105 մլն դրամ՝ խախտելով Ուղեցույցի «Դ.3.» գլխի 33-րդ կետի պահանջները:
- Կառավարչական ծառայությունների մասով Հիմնադրամը 2018-2019 թվականների ընթացքում շահերի բախման ռիսկի առկայությամբ Ա/Ձ Վաղարշակ Կանայանից ձեռք է բերել ընդամենը 4,4 մլն դրամի ծառայություն:
- «Եղեգնաձորի պահածոների գործարան» ՓԲ ընկերության կողմից թույլ տրված պայմանագրային և ծրագրային շեղումների հիմքով Հիմնադրամը իրավունք ունի լուծել բաժնեմասնակցային ներդրման Պայմանագիրը՝ հետ պահանջելով իր կողմից ներդրված 240 մլն դրամ գումարը, սակայն Հիմնադրամի կողմից համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվել վերոնշյալ պայմանագիրը լուծելու համար:
- «Եղեգնաձորի պահածոների գործարան» ՓԲ ընկերությանը տրամադրված 120 մլն դրամ փոխառության գումարի մասով առկա է Ընկերության համար ակնկալվող արդյունքը չստանալու ռիսկ, քանի որ անգամ Հիմնադրամի կողմից վճարման ժամանակացուցի 4 անգամ երկարաձգման դեպքում էլ՝ Ընկերությունը շարունակում է ունենալ պայմանագրային պարտավորությունների կատարման կետանց, որն ի հայտ է եկել դեռևս 2018 թվականից և նշված ռիսկը վերացնելու ու

փոխառության գումարը հետ ստանալու փոխարեն, Հիմնադրամը մինչ օրս առանց ընդունելի պատճառների շարունակում է գործարքի պայմանները փոփոխել Ընկերության օգտին:

- Հիմնադրամը ընդամենը 571 մլն դրամ գումարների նպատակային ծախսման վերաբերյալ չունի և մշտադիտարկման ընթացքում չի ներկայացրել արժանահավատ տեղեկատվություն, որի արդյունքում չի վերահսկել հատկացված գումարների ծախսման ուղղությունները:

Հիմնադրամում իրականացված մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են շուրջ 618 մլն դրամի խախտումներ և այլ թերություններ: Տեղեկանքն ուղարկվել է ՀՀ դատախազություն: Հարուցվել է քրեական գործ:

Իրականացվել է մշտադիտարկում **«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ում**: Արդյունքում պարզվել է հետևյալը՝

-ՀՀ կառավարության 05.04.2012թ. թիվ 380-Ն որոշմամբ Երևանի քաղաքապետարանին տրամադրելու համար ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 1 մլրդ դրամ Երևան քաղաքում ջերմատների կառուցման և զարգացման ներդրումային ծրագրի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման նպատակով:

Հատկացված գումարների բաշխման ճշտության մշտադիտարկմամբ պարզվել է, որ առկա են բազմաթիվ դեպքեր, երբ քաղաքացին ոչ բոլոր փաստաթղթերն է ներկայացրել դիմումին կից, մասնավորապես՝ ներկայացվել են միայն ժամկետանց և որևէ իրավական ուժ չունեցող հողի վարձակալության պայմանագրեր:

Հողօգտագործողների կողմից մի շարք դեպքերում ներկայացվել են պետական պահուստային ֆոնդի հողերի վարձակալության մասին պայմանագրեր, որոնք 2012թ. դրությամբ արդեն երկար տարիներ ժամկետանց և ուժը կորցրած են եղել: ՀՀ կառավարության 09.03.1994թ. թիվ 108 որոշմամբ սահմանված է, որ ՀՀ պետական պահուստային ֆոնդի հողերը վարձակալությամբ են տրվում մրցութային հիմունքներով: Նույն որոշմամբ հաստատված ՀՀ պետական պահուստային ֆոնդի հողերի վարձակալության մրցույթի անցկացման կարգի 14-րդ կետի համաձայն՝ պատգամավորների համապատասխան խորհրդի գործադիր կոմիտեն մրցույթի հաղթողի հետ կնքում է հողի վարձակալության մասին պայմանագիր:

Այսպիսով՝ սույն մշտադիտարկմամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից թվով 422 դեպքով 115.746հա հողատարածքի համար որպես աջակցություն ընդամենը 1,043,943.0 հազ. դրամի տրամադրումն իրականացվել է բազմաթիվ խախտումներով, թերություններով և բացթողումներով, ուստի այս ողջ գործընթացը դիտարկվում է խիստ ռիսկային: Տեղեկանքն ուղարկվել է ՀՀ դատախազություն: Հարուցվել է քրեական գործ:

Իրականացվել է մշտադիտարկում **Կադաստրի կոմիտեում**: Մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ առկա են խախտումներ գնումների գործընթացներում, ինչպես նաև կան չհիմնավորված ծախսեր: Տեղեկանքը ներկայացվել է վարչապետի աշխատակազմ:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի կողմից ներկայացված հանրագրի հիման վրա իրականացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար «Վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքբերման նպատակով» անցկացված գնման ընթացակարգերի մշտադիտարկում: Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ կազմվել է տեղեկանք և ներկայացվել ՀՀ Վարչապետի աշխատակազմ:

«ԱՐՄՏԱԿ-ԻՄՊԷՔՍ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից ստացված հանրագրի հիման վրա իրականացվել է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության կողմից ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ 20/07 ծածկագրով Սևանա լճի ջրածածկ անտառատնկիների մաքրման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի մշտադիտարկում, որի շրջանակներում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկանքը ներկայացվել է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն:

Անհատ ձեռնարկատիրոջ առցանց հարցման շրջանակում իրականացվել է մշտադիտարկում: Գրությամբ պատասխանվել է Ա/Ձ -ին՝ գնումների գործընթացներին վերջինիս մասնակցության իրավունքի վերաբերյալ:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից ստացված գրության հիման վրա մշտադիտարկում է իրականացվել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կողմից ՀՀ ԱՆ ԶԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1 ծածկագրով անվտանգության ռենտգեն սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի փաթեթով գնման գործընթացի օրինականության նկատմամբ: ՀՀ արդարադատության նախարարություն են ներկայացվել դիտարկումներ գնման գործընթացի՝ խախտումներով կազմակերպելու և արդյունքում առանց ՀՀ վարչապետի համաձայնեցման դեկտեմբերի 20-ից հետո կազմակերպված գնման ընթացակարգի վերաբերյալ:

Իրականացվել է ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից հայտարարված գնման գործընթացի մշտադիտարկում: Արձանագրվել են սահմանված ժամկետների խախտումներով գնման գործընթացների իրականացման մի շարք դեպքեր, առանց ՀՀ Վարչապետի՝ սահմանված կարգով համաձայնեցումները ստանալու: Արդյունքում կազմված տեղեկանքը առձեռն ուղղարկվել է ՀՀ վարչապետին՝ պատասխանատու աշխատակիցների կարգապահական պատասխանատվության ենթարկելու և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ինքնաշխատ հսկողական գործիք նախատեսելու նպատակով՝ բացառելով հետագայում նման խախտումները:

Իրականացվել է մշտադիտարկում ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնում (այսուհետ՝ Տեսչական մարմին), որի ընթացքում դիտարկվել են Տեսչական մարմնի մի շարք աշխատակիցների, ինչպես նաև ղեկավարի նախկին տեղակալի դիմում-բողոքներով բարձրացված հարցերը:

☐ Իրականացվել է մշտադիտարկում ««Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն» ՓԲԸ-ում, որտեղ դիտարկման են ենթարկվել կազմակերպության կարիքների համար հայտարարված որոշ գնման ընթացակարգերը, ծառայողական ավտոմեքենաների համար ձեռք բերված վառելիքի քանակները, գները և

աղբահանության ու մաքրման խնդիրները: Մշտադիտարկման արդյունքներով նախնական գնահատմամբ ՓԲԸ-ին հասցված հնարավոր վնասների հանրագումարը կազմում է շուրջ 15 մլն ՀՀ դրամ: Մշտադիտարկման արդյունքում կազմվել է տեղեկանք, որը ներկայացվել է ՀՀ վարչապետին և միաժամանակ ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե:

□ «Հոռնետ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից ստացված հանրագրի հիման վրա իրականացվել է մշտադիտարկում՝ ըստ դիմումատուի ՀՀ ոստիկանության կողմից ստեղծված և տվյալ ընկերության գործունեությանը խոչընդոտ հանդիսացող իրավիճակի ուղղությամբ: Արդյունքում՝ ի պատասխան վերոնշյալ հանրագրի, «Հոռնետ» ՍՊԸ-ի տնօրենին ուղարկվել է գրություն, համաձայն որի՝ գրությամբ հիշատակված տարածքների վարձակալության տրամադրումը բխում է ՀՀ ոստիկանության կարիքներից և կարող է իրականացվել միայն սահմանված կարգով և անհրաժեշտ հիմնավորմամբ: Միաժամանակ տեղեկացվել է նաև, որ ըստ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից տրամադրված կարծիքի, գրության մեջ հիշատակված տարածքներում մեկ ընկերության կողմից պատճենահանման և լուսանկարահանման ծառայությունների մատուցումը հանգեցնում է անհավասար մրցակցության այլ տնտեսվարողների համար:

□ Մշտադիտարկում է իրականացվել ՀՀ ԿԱ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի իրականացման գրասենյակ» ՊՀ-ում Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջև 2015 թվականի սեպտեմբերի 3-ին ստորագրված N 1673P փոխառության համաձայնագրով իրականացված «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագրի վերաբերյալ:

Մշտադիտարկման ընթացքում անդրադարձ է կատարվել «Արարատշին» ՍՊԸ-ի կողմից իրականացված խնդրահարույց աշխատանքներին (տվյալ դեպքում խնդրահարույց են համարվել տարբեր տրամագծի պոլիէթիլենային խողովակներով իրականացված ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքները, որոնք հաճախակի վնասվում են և ենթակա են փոխարինման): «Արարատշին» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Լոռու մարզի Դսեղ և Սվերդլով, ՀՀ Տավուշի մարզի Կողբ և Կոթի համայնքներում իրականացվել են ընդանուր գումարով շուրջ 1,6 մլրդ դրամի անորակ աշխատանքներ, որի պատճառը, ըստ «Արարատշին» ՍՊԸ-ի տնօրենի պարզաբանման, հանդիսացել է «Վեդի պլաստ» ՍՊԸ-ից ձեռք բերված անորակ պոլիէթիլենային խողովակների տեղադրումը: «Արարատշին» ՍՊԸ-ի տնօրենն իր պարզաբանմամբ նշել է, որ ցանկացած վթար ընկերության կողմից վերացվել է, խողովակները փոխարինվել են և պարտավորվել է հետագայում վերացնել ցանկացած վթար և շարունակել վթարված խողովակների փոխարինումը մինչև ջրագծի նորմալ շահագործումը, որի վերաբերյալ վերը նշված համայնքների ղեկավարներին տրվել են պարտավորագրեր:

ՀՀ ԳԱԱ Հ. Բունիայանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի (այսուհետ՝ Ինստիտուտ) չարաշահումների վերաբերյալ քաղաքացու դիմումի հիման վրա իրականացվել է մշտադիտարկում և չարաշահումների վերաբերյալ տեղեկատվության արժանահավատության ստուգում:

Մասնավորապես՝

1) 12.03.2017թ.-ից 11.12.2017թ. Ինստիտուտի տնօրենի որդուն վճարվել է 2,4 մլն դրամ աշխատավարձ, սակայն վերջինս փաստացի չի գտնվել աշխատանքային հարաբերությունների մեջ գործատու՝ Ինստիտուտի հետ, և առկա են հիմնավոր կասկածներ աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրերում գործուղված լինելու վերաբերյալ կեղծ տեղեկատվության ներառելու և աշխատավարձ հաշվարկելու վերաբերյալ: Հանրագրով ներկայացված տեղեկատվությունը հաստատվել է:

2) Կախասնկի ապօրինի արտադրության վերաբերյալ տեղեկատվության մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ սնկի արտադրության փաստ կամ գործընթաց չի արձանագրվել, սակայն Ինստիտուտում առկա են սնկի արտադրության համար նախատեսված բոլոր համապատասխան պայմանները՝ տարածք, միջոցներ, անհրաժեշտ պարագաներ, թափոններ: Նշված երևույթների վերաբերյալ պարզաբանում է պահանջվել Ինստիտուտի տնօրենից, ում կողմից հերքվել է սնկի արտադրության հանգամանքը: Հանրագրով ներկայացված տեղեկատվությունը մշտադիտարկման արդյունքում չի հաստատվել:

Մշտադիտարկման արդյունքներն ուղարկվել են ՀՀ դատախազություն և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի գրության հիման վրա իրականացվել է «Նոր սերնդի դպրոց» ՀԿ-ի կողմից իրականացված միջոցառումների շրջանակներում ծախսված միջոցների նպատակայնության և արդյունավետության մշտադիտարկում: Արդյունքում առաջացել են հիմնավոր կասկածներ այն մասին, որ 2017-2018թթ. միջոցառման իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեով նախատեսվել են կարիքին էականորեն գերազանցող միջոցներ: Միջոցառումն իրականացնող ՀԿ-ն, ստանալով 180 մլն դրամ համախառն եկամուտ, ձևավորել է 74 մլն դրամի շահույթ: Բացի այդ, ՀԿ-ի կողմից միջոցառման շրջանակներում ստացված 180 մլն դրամը դիտարկվել է որպես պետական բյուջեից ստացված միջոց կամ դրամաշնորհ, սակայն փաստացի վերոգրյալի արդյունքում գոյացել է շահույթ, ուստի ստացված միջոցները պետք է հանդիսանային ձեռնարկատիրական գործունեությունից ստացված՝ և շահութահարկի հաշվետվություններով ներկայացվեին որպես եկամուտ: Տեղեկանքն ուղարկվել է ՀՀ դատախազություն: Հարուցվել է քրեական գործ, որի նախաքննությունը հանձնարարվել է ՀՀ քննչական կոմիտեին:

Ամբողջությամբ ավարտին է հասցվել տարբեր մշտադիտարկումների արդյունքում արձանագրված 2016-2018 թվականներին բազմաթիվ պետական մարմինների մոտ սոցիալական փաթեթի հանգստի ծառայության մասով առաջացած ավելի քան 30 մլն դրամի չափով կրեդիտորական պարտքերի մարման գործընթացը:

«ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հանրագրի հիման վրա իրականացվել է մշտադիտարկում: Ներկայացվել է պատասխան գրություն ՀՀ ճանապարհային ոստիկանության կողմից «ճանապարհային գծանշումների»

ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ:

Ներդրումներ կատարելու համար **ՀՀ Լոռու մարզի Անտառամուտի համայնքում** գտնվող գորշ ածխի երևակման տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու, հետագայում շահագործելու նպատակով ածխի պաշարների հաշվարկման հարցով «Ստանդարտ ԶՈԱԼ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից ներկայացված հանրագրի հիման վրա իրականացվել է մշտադիտարկում: Մշտադիտարկման արդյունքները պատասխան գրությամբ ուղարկվել է հանրագրի ներկայացնողին:

Քաղաքացու կողմից ստացված հանրագրի հիման վրա իրականացվել է մշտադիտարկում **Երևանի քաղաքապետարանում համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի օտարման հետ կապված:** Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ պատասխան է ուղարկվել քաղաքացուն:

Ի պատասխան «Սի Էս Սի» ՍՊԸ-ի կողմից ՀՀ վարչապետի աշխատակազմ մուտքագրված հանրագրի՝ իրականացվել է համապատասխան մշտադիտարկում: Մշտադիտարկման արդյունքում Դիլիջան համայնքում ընդերքի օգտագործման իրավունք ստանալու վրաբերյալ կազմված տեղեկանքն ուղարկվել է ՀՀ Վարչապետի աշխատակազմ:

Մշտադիտարկում է իրականացվել **ՀՀ պաշտպանության նախարարության պարենավորման պատվիրակման ծրագրի շրջանակներում:** Տվյալ մշտադիտարկման ընթացքում ամփոփվել է ՀՀ ՊՆ կողմից պարենավորման պատվիրակման ծրագրի շրջանակներում կապիտալ շինարարական բաղադրիչի առկայության արդյունավետության ուսումնասիրությունը: Արդյունքում կազմվել է տեղեկանք և ներկայացվել ՀՀ Վարչապետին՝ առաջարկելով մասնավոր գործընկերների հետ կնքված պայմանագրերում կատարել համապատասխան փոփոխություններ և կապիտալ շինարարության բաղադրիչը դուրս բերել պարենավորման ծրագրի շրջանակներից: Առաջարկվել է վերոնշյալ կապիտալ շինարարական աշխատանքների կատարման համար կազմակերպել համապատասխան պետական գնման գործընթացներ՝ պահպանելով ՀՀ քաղաքաշինական ոլորտի օրենսդրական դաշտի պարտադիր նորմերը:

«Արմօյլ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հանրագրի հիման վրա իրականացվել է մշտադիտարկում ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքում և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության կենտրոն» ՊՈԱԿ-ում: Արդյունքների վերաբերյալ կազմվել է տեղեկանք և ներկայացվել ՀՀ վարչապետի աշխատակազմ: Արձանագրվել է, որ ՀՀ-ում կիրառվում են դեռևս ԽՍՀՄ արդյունաբերական շինարարության նորմատիվ կարգավորումները, ինչը խնդրահարույց է և միտված չէ ներդրումների խթանմանը: Տրվել է առաջարկ՝ քննարկել և վերանայել նշված իրավակարգավորումը: Պատասխան է ուղարկվել նաև «Արմօյլ» ՓԲԸ-ին:

Իրականացվել է **«Սիլ Կապիտալ» ՍՊԸ-ի** կողմից Երևան քաղաքի Զանաքեռ-Չեյթուն վարչական շրջանի Ագատության պողոտա 2/14 հասցեում գտնվող զբոսայգու տարածքում ֆերիսային անիվի տեղադրման ներդրումային ծրագրի

մշտադիտարկում: Արդյունքները ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: Առաջարկվել է փաստաթղթավորել ներդրող-համայնք իրավահարաբերությունները, իսկ հնարավոր խոչընդոտներ առաջանալու պարագայում՝ լրացուցիչ քննարկել խնդիրը:

Ավարտվել է «ԱԱ Թրաքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հանրագրի հիման վրա իրականացված մշտադիտարկումը ՀՀ ֆինանսների նախարարությունում և ՀՀ պետական եկամուտների կոմիտեում: Մշտադիտարկման առարկա է հանդիսացել ընկերության կողմից ՀՀ ազատ տնտեսական գոտում արտադրվող բազմաֆունկցիոնալ ավտոմեքենաների համար ազատ տնտեսական գոտուց տեղափոխելու պարզ ընթացակարգի կիրառման հնարավորության թույլատրելիությունը՝ ՀՀ տարածքում մեքենաները որպես նմուշ ցուցադրելու և վերասարքավորելու նպատակով: ՀՀ ՊԵԿ-ի կողմից արդեն իսկ ներկայացվել է ԵԱՏՄ մաքսային կարգավորումների վերաբերյալ կառավարության որոշման նախագիծ և շրջանառվել համապատասխան մարմիններ՝ կարծիքի: Նշված կարգավորման ընդունմամբ բարձրացված խնդիրը լուծում կստանա:

ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորի կողմից ներկայացված

տեղեկատվության հիման վրա՝ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու պաթյուգոանատոմիական լաբորատորիա» ՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքների վերաբերյալ իրականացվել է մշտադիտարկում: Մշտադիտարկման արդյունքում կազմված տեղեկանքը և տեղեկանքի վերաբերյալ վերահսկվող օբյեկտների կարծիքները ներկայացվել է ՀՀ վարչապետին:

Մշտադիտարկում է իրականացվել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 220/110/35 կՎ «Լիճք» ենթակայանի վերակառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի կազմման և շինարարական աշխատանքների իրականացման համար՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացված մրցութային փաթեթի նկատմամբ: Վերոնշյալ գնման գործընթացի վերաբերյալ կարծիք-դիրքորոշում է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ըստ որի անհրաժեշտ է նախագծային փաստաթղթերի կազմումը և շինարարության իրականացումը կազմակերպել տարանջատված գնումների գործընթացների միջոցով՝ զսպելով հնարավոր ռիսկերը:

Մշտադիտարկում է իրականացվել «Արմանքեշ» ՍՊԸ-ին խորքային հորի տրամադրման գործընթացի նկատմամբ: Մշտադիտարկման արդյունքում կազմված տեղեկանքը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Արդյունքում արձանագրվել է, որ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված ժամկետներում չի իրականացվել ջրային ավազանների չափագրման աշխատանքները: Արդյունքում առաջարկվել է քննարկել կոնսերվացված խորքային հորի վարձակալությամբ տրամադրման տարբերակը՝ օժանդակելով իրականացված ներդրումային ծրագրի (ջերմոցային տնտեսության հիմնում) ընթացքին:

«Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ստացված հանրագրի հիման վրա մշտադիտարկում է իրականացվել ՀՀ ԱՆ «Պրոֆ ՌԶ ԶՁ Յոլանի անվան արյունաբանական

կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգերի շրջանակում «Վիոլա» ՍՊԸ-ին գների շուրջ միաժամանակյա բանակցությունների անցկացման մասին ոչ պատշաճ կերպով ծանուցելու վերաբերյալ: Արդյունքում պատասխան է ներկայացվել «Վիոլա» ՍՊԸ-ին, ինչպես նաև համապատասխան գրությամբ ՀՀ ԱՆ «Պրոֆ ՌԶ ԶՊ Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ին են ներկայացվել մշտադիտարկման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները գնումների մասին ՀՀ օրենսդրությանը: «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից ստացված հանրագրի հիման վրա մշտադիտարկում է իրականացվել Երևան համայնքի «Ջրային կառույցների» ՓԲԸ կողմից պոմպերի վերանորոգման և սպասարկման ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպված թիվ «ՋԿ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով գնման ընթացակարգում տեղ գտած խախտումների ուղղությամբ: Արդյունքների մասին պատասխանվել է դիմողին՝ առ այն, որ կազմակերպությունը գնման ընթացակարգի հրավերի տեքստը կազմել է համապատասխան այն կարիքին, ինչի համար հայտարարվել է տվյալ գնման ընթացակարգը:

«ԷՅՁ-ԴԻ Պրինտ» ՍՊԸ-ի տնօրենի՝ ՀՀ վարչապետի աշխատակազմից ստացված հանրագրի հիման վրա «Երևանի պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից համակարգչային և պատճենահանման սարքավորումների, պարագաների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի ուղղությամբ իրականացվել է մշտադիտարկում: Արձանագրվել է, որ հայտարարված ընթացակարգի տեխնիկական պահանջները սահմանվել են՝ ելնելով կազմակերպության կարիքի բավարարումից և առկա երաշխիքային պայմանագրից: Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմվել է տեղեկանք և ներկայացվել ՀՀ վարչապետի աշխատակազմ:

«Արմեն Համիկ Եղբայրներ» ՀԶ ՍՊԸ-ի տնօրենի կողմից ներկայացված հանրագրի հիման վրա իրականացվել է մշտադիտարկում ՀՀ առողջապահության նախարարության «ՎԶ ԱԶ Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով ՌԲԱԿ-ԲՍԱՊՁԲ-20/10 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի ուղղությամբ: Արձանագրվել է, որ կազմակերպությունը պատշաճ ծանուցվել է պայմանագիր կնքելու օրվա վերաբերյալ, սակայն չի ներկայացվել պայմանագիր կնքելու: Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ գրություն է ներկայացվել «Արմեն Համիկ Եղբայրներ» ՀԶ ՍՊԸ-ին:

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի կարիքների համար 2020 թվականի փետրվարի 5-ին աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՖԿՍՊԻ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ «Ֆայնենշալ ըղվայզ գրուպ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից ստացված հանրագրով բարձրացվել է խնդիր, համաձայն որի մրցույթի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել են խտրական չափորոշիչներ: Ներկայացված խնդրի առնչությամբ իրականացվել է մշտադիտարկում: Արդյունքում պատասխան է տրամադրվել հանրագիր ներկայացրած ընկերությանը, կազմվել է տեղեկանք և ներկայացվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (ՀՀ ԿԳՄՄՆ), ինչպես նաև տեղեկանք է ներկայացվել «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և

սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ռեկտորին՝ առաջարկելով հետագայում գնման գործընթացները կազմակերպել՝ ձեռնարկելով հնարավոր բոլոր միջոցները, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման նպատակով:

«Ասատրյան» ՍՊԸ-ի տնօրենի կողմից ներկայացված հանրագրի հիման վրա իրականացվել է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով ԵՊՀ-ԳՀԾԶԲ-20/46 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի մշտադիտարկում: Արդյունքների վերաբերյալ գրություն է ներկայացվել «Ասատրյան» ՍՊԸ-ին՝ առ այն, որ «Ֆոր Էյ Քսալթինգ» ՓԲԸ-ի կողմից մրցույթին մասնակցելու փաստաթղթերը ներկայացվել են ժամկետի մեջ և չեն հակասում գործող օրենսդրությանը:

«Վահրադյան Շին» ՍՊԸ տնօրենի կողմից ներկայացված հանրագրի հիման վրա իրականացվել է հանրագրով բարձրացված խնդիրների (Արթիկի համայնքապետարանի կողմից ասֆալտապատման աշխատանքների դիմաց վճարումների չկատարում, համայնքում ուսումնասիրություն նախաձեռնելու անհրաժեշտություն) մշտադիտարկում: Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ գրություն է ներկայացվել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին: Արդյունքում պարզվել է, որ ընկերության կողմից աշխատանքները չեն կատարվել պատշաճ որակով, և աշխատանքները չեն ունեցել տեխնիկական հսկողություն իրականացնողի դրական եզրակացությունը և չեն վճարվել համայնքապետարանի կողմից, իսկ գործընթացը վիճարկվում է դատարանում:

Անհատ ձեռնարկատիրոջ կողմից ներկայացված հանրագրի հիման վրա իրականացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ֆաքսիմիլային սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով, ՊԵԿ-ԳՀԾԶԲ-20/005 ծածկագրով, հայտարարված գնման ընթացակարգի մշտադիտարկում: Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմվել է տեղեկանք և ներկայացվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե: Արդյունքում արձանագրվել է ՊԵԿ գնահատող հանձնաժողովի կողմից գնային առաջարկի ներկայացման սխալ մեկնաբանություն, իսկ գործընթացը վիճարկվում է ՀՀ դատարանում:

Իրականացրել է մշտադիտարկում՝ **«Սևան» ազգային պարկի** Լճաշեն-Սևան թերակղզու հատվածում ճեմուղու կառուցման նպատակով իրականացվող գործընթացների նկատմամբ: Մշտադիտարկման արդյունքում կազմվել է տեղեկանք և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Արդյունքում նախագծա-նախահաշվային աշխատանքների գնման գործընթացներում արձանագրվել է անհամապատասխանություն:

Իրականացվել է մշտադիտարկում՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության **««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ**-ի տարածքում՝ Սևանավանքին հարակից վայրում, տնտեսվարողների կողմից իրականացվող հուշանվերների փողոցային առևտուրը կանոնակարգելուն միտված գործընթացի նկատմամբ: Մշտադիտարկման արդյունքում կազմվել է տեղեկանք և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

իրականացվել է մշտադիտարկում **ՀՀ պաշտպանության նախարարությունում**:
Մշտադիտարկման ոլորտն ընդգրկել է ՀՀ ՊՆ կողմից ՀՀ ՊՆ Երևան քաղաքի
կենտրոնական գինվորական հոսպիտալում 2019-2020 թվականների ընթացքում
իրականացված շինարարական աշխատանքների որակի նկատմամբ
օրենսդրությամբ սահմանված կարգով տեխնիկական հսկողություն իրականացված
լինելու կամ դրա բացակայության հանգամանքի պարզաբանումը:
Մշտադիտարկման ընթացքում պարզվել է, որ ՀՀ ՊՆ Հոսպիտալում 2019 թվականի
ընթացքում իրականացված շինարարության ընթացքում օրենսդրությամբ
սահմանված կարգով տեխնիկական հսկողության պայմանագրեր չեն կնքվել և
համապատասխան հսկողություն չի իրականացվել: Միաժամանակ պարզվել է, որ
2020 թվականին ՀՀ ՊՆ-ն կնքել է տեխնիկական հսկողություն իրականացնելու
պայմանագիր, որով համապատասխան կազմակերպությունը օրենսդրական
պահանջներին հակասող պարտավորություն է ստանձնել, այն է՝ վերջինս
պարտավորվել է 2020 թվականի ընթացքում իրականացվելիք համապատասխան
շինաշխատանքների նկատմամբ հսկողություն իրականացնելուց զատ ընդունել և
ստորագրել նաև 2019 թվականին կապալառու կազմակերպության կողմից
իրականացված շինարարության կատարողական ակտերը:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի կողմից ներկայացված տեղեկատվության
հիման վրա՝ ՀՀ Շիրակի մարզի **«Գյումրու Մոր և մանկան ավատրիական
հիվանդանոց» ՓԲԸ**-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար
անցկացված մրցույթի արդյունքների վերաբերյալ իրականացվել է մշտադիտարկում:
Մշտադիտարկման արդյունքում կազմված տեղեկանքն ուղարկվել է վերահսկվող
օբյեկտներին՝ կարծիքի: ՀՀ Շիրակի մարզպետարանից ստացվել է կարծիքը, իսկ ՀՀ
առողջապահության նախարարությունից հայտնել են, որ կորոնավիրուսի
համաճարակով պայմանավորված՝ գերծանրաբեռնված են և չեն կարող կարծիք
տալ, որը կտրամադրվի ավելի ուշ:

Իրականացվել է մշտադիտարկում **Հայաստանի տարածքային զարգացման
հիմնադրամի կողմից** ՁՆ-ԽԲՄ-ՃԾԲ-2020/31/32 ծածկագրով գնման
ընթացակարգի ուղղությամբ: Արձանագրվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության
անհամապատասխանություններ: Արդյունքում պատվիրատուի կողմից կատարվել է
հրավերի փոփոխություն:

«Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից ստացված հանրագրի հիման վրա
մշտադիտարկում է իրականացվել ՀՀ ոստիկանության կողմից ծաղկային
կոմպոզիցիաների ծառայությունների ձեռքբերման նպատակով ՀՀ Ո ԳՀՃԾԲ-2020-
ԾԱՂԻԿ-43 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի ուղղությամբ:
Արդյունքների վերաբերյալ կազմվել է տեղեկանք և ներկայացվել ՀՀ
ոստիկանություն. առաջարկվել է ընթացակարգը հայտարարել չկայացած, ինչն
ընդունվել է ՀՀ ոստիկանության ուղղության կողմից:

Իրականացվել է մշտադիտարկում **Մ-ԲԻ-ԷՌ ՍՊԸ**-ի տնօրենը համապատասխան
հանրագրի հիման վրա, որով դիմումատուն հայտնել է, որ 2020 թվականի մարտի
16-ից ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության ժամանակահատվածում
պարետի որոշմամբ կազմակերպությունների մեծ մասի գործունեության
դադարեցման պարագայում մի շարք պատվիրատուների կողմից կազմակերպվել են

(ԳՅԾՁԲ-ԱԻՆ-20/50, ՀՀԿԳՄՍՆԳՅԾՁԲ-20/45, ՏԿԵՆ-ԳՅԾՁԲ-2020/9Ծ, ՀՀԱՆ-ԳՅԾՁԲ-20/6 ծածկագրերով) ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգեր, իսկ ընկերությունը, հաշվի առնելով երկրում տիրող արտակարգ դրությունը և պարետի որոշումը, չի կարողացել մասնակցության հայտ ներկայացնել ընթացակարգերին: Համաձայն հանրագրի՝ ընկերությունը խնդրել է ընթացակարգերը կասեցնել և հայտարարել նոր ընթացակարգ, քանի որ խախտվել են ազատ մրցակցային հարաբերությունները: Մշտադիտարման արդյունքը ուղարկվել է դիմողին՝ մատնանշելով տվյալ ժամանակահատվածում խոչընդոտների բացակայության մասին:

Լոռու մարզի Նորաշեն գյուղի բնակչի՝ ՀՀ վարչապետի աշխատակազմից ստացված դիմումի հիման վրա իրականացվել է մշտադիտարկում ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման 16-րդ հավելվածով հաստատված ծրագրում ներառված «ենթածրագիր 2»-ի (աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ (տավարաբուծությամբ, ոչխարաբուծությամբ, խոզաբուծությամբ, այծաբուծությամբ, թռչնաբուծությամբ) պայմանների ու տրամադրման կարգի վերաբերյալ: Արդյունքում դիմումում բարձրացված հարցերի շրջանակներում խախտումներ չեն հայտնաբերվել:

Քաղաքացու կողմից ներկայացված հանրագրի հիման վրա իրականացվել է **ՀՀ դատական դեպարտամենտի կողմից 2017-2019թթ. թարգմանչական ծառայությունների ձեռքբերման գործընթացների մշտադիտարկում:** Մշտադիտարկման արդյունքում կազմված տեղեկանքը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, ուղարկվել է նաև ՀՀ գլխավոր դատախազություն՝ հանցագործության հատկանիշների առկայության հանգամանքը ստուգելու նպատակով:

«Որդի Միեր» ՍՊԸ-ի տնօրենի կողմից ներկայացված հանրագրի հիման վրա իրականացվել է մշտադիտարկում «Մելորացիա» ՓԲԸ-ում: Կատարվել է ՓԲԸ-ի գործունեության արդյունավետության վերլուծություն և պարզվել, որ վերջինիս աշխատանքների կազմակերպումն առավել նպատակահարմար է սեփական հիմնական միջոցների կիրառմամբ, քան արտապատվիրակման եղանակով: Մշտադիտարկման արդյունքները ներկայացվել են «Որդի Միեր» ՍՊԸ-ի տնօրենին:

Արմավիրի համայնքապետարանի ««Բարեկարգում» տնօրինություն» ՓԲԸ-ին է ներկայացվել ԱԶ-ԲՏ-ԳՀԱՊՁԲ-20/4 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի մշտադիտարկման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները գնումների մասին ՀՀ օրենսդրությանը: Արդյունքում պատվիրատուի կողմից կատարվել է հրավերի փոփոխություն:

«Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ին է ներկայացվել ՇՄԳՄՍԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/4-3 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի մշտադիտարկման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները գնումների մասին ՀՀ օրենսդրությանը:

Իրականացվել է մշտադիտարկում **www.procurement.am** կայքում: Արդյունքում պարզվել է՝ 

- ՀՀ դատախազության կարիքների համար տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման նպատակով □ՀԳԴ-ԳՀԱՊԶԲ-20/3□ ծածկագրով հայտարարված գնանշման հարցում ընթացակարգի արդյունքում կնքվել է պայմանագիր □Ասմիդա□ ՍՊԸ-ի հետ, սակայն վերջինս այդ ընթացքում ընդգրկված է եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում: Մշտադիտարկման արդյունքները ներկայացվել են ՀՀ դատախազություն՝ առաջարկելով վերջինիս միակողմանի լուծել պայմանագիրը: Առաջարկն ընդունվել է ՀՀ դատախազության կողմից:

- ՀՀ արդարադատության նախարարության կարիքների համար գրենական ապրանքների և քարթրիջների ձեռքբերման նպատակով □ՀՀԱՆ-ԳՀԱՊԶԲ-20/1□ ծածկագրով հայտարարված ընթացակարգի արդյունքում կնքվել է պայմանագիր □Փեն բոքս□ ՍՊԸ-ի հետ, սակայն վերջինս այդ ընթացքում ընդգրկված է եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում: Մշտադիտարկման արդյունքները ներկայացվել են ՀՀ արդարադատության նախարարություն՝ առաջարկելով վերջինիս միակողմանի լուծել պայմանագիրը: Առաջարկն ընդունվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

- «Հայջրմուղկոյունի» ՓԲԸ կարիքների համար քարթրիջների լիցքավորման ծառայությունների ձեռքբերման նպատակով □ՀԶԿ-ԳՀԾԶԲ-20/4□ ծածկագրով հայտարարված ընթացակարգի արդյունքում մասնակցության հայտ է ներկայացրել □Ստարտկոպի□ ՍՊԸ-ն, սակայն վերջինս այդ ընթացքում ընդգրկված է եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում: Մշտադիտարկման արդյունքները ներկայացվել են «Հայջրմուղկոյունի» ՓԲԸ՝ առաջարկելով վերջինիս գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ վարչապետի աշխատակազմից ստացված «ԷՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրենի հանրագրի հիման վրա իրականացվել է մշտադիտարկում: Հանրագիրը եղել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ՏԿԵՆ-ԲՄԱՇԶԲ-2020/4Ծ ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի վերաբերյալ: Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

ՀՀ վարչապետի աշխատակազմից ստացվել է Էյ-Էմ-ԷյՋ Առևտրի ՓԲԸ-ի հանրագիրը՝ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից «ԴԴ-ԳՀԾԶԲ-19/23» ծածկագրով հայտարարված մրցույթի արդյունքում կնքված պայմանագրի վերաբերյալ: Իրականացվել է մշտադիտարկում: Արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Իրականացվել է մշտադիտարկում թվով 35 պետական մարմինների կողմից տիրապետվող տարածքներում տեղադրված վճարային տերմինալների, սուրճի, հյուրի և այլ սմանատիպ ավտոմատացված սարքերի, ինչպես նաև այլ առևտրային գործունեության իրականացման դեպքում՝ դրանց համար հատկացված տարածքների վարձակալության տրամադրման պայմանների նկատմամբ: Հաշվետու ամսվա վերջի դրությամբ առկա արդյունքների համաձայն՝

Թվով 35 պետական մարմիններից 14-ը ՀՀ պետական վերահսկողական ծառայությանը ներկայացրել են, որ իրենց և իրենց ենթակայության մարմինների կողմից տիրապետվող տարածքներում տեղադրված վճարային տերմինալների, սուրճի, հյութի և այլ նմանատիպ ավտոմատացված սարքերի, ինչպես նաև այլ առևտրային գործունեության համար տրամադրված տարածքներ չկան, իսկ մնացած 21 պետական մարմինների կողմից Ծառայությանը ներկայացվել է թվով 749 տարածքների վարձակալության վերաբերյալ տվյալներ, որոնցից՝

- թվով 96 տարածքներում տեղադրված է սուրճ պատրաստող սարք (կամ նմանատիպ սարքավորում),
- թվով 222 տարածքներում տեղադրված են վճարային տերմինալներ,
- թվով 5 տարածքներում գործում են բանկերի մասնաճյուղեր,
- թվով 48 տարածքներում տեղադրված են բանկոմատներ,
- թվով 22 տարածքներ տրամադրված է դեղատներին,
- թվով 356 դեպքերում տարածքները տրամադրված են այլ առևտրային գործունեության իրականացման համար:

Վերլուծելով ներկայացված տվյալները և ոլորտը կարգավորող օրենսդրությունը՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը առաջարկել է՝

1. մշտադիտարկման արդյունքում կազմված տեղեկանքում նշված, սակայն առանց կառավարության որոշման պետական գույքի անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման բոլոր 42 դեպքերը համապատասխանեցնել ՀՀ կառավարության 17.02.2011թ-ի N 304-Ն որոշմանը:
2. Բացահայտել միևնույն տեսակի սարքերի (այլ առևտրային գործունեության) և նույնական տարածքների համար տարբեր մեծությամբ վարձավճարների առկայության պատճառները և, անհրաժեշտության դեպքում, իրականացնել համապատասխան աշխատանքներ առավել ցածր վարձավճարների բարձրացման ուղղությամբ:
3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 05.09.2019 թվականի N 1188-Ա որոշումը:
4. Պետական գույքի վարձակալության տրամադրման արդյունավետության բարձրացման նպատակով իրականացնել լայնածավալ օրենսդրական փոփոխություններ: Մասնավորապես՝ ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը լիազորություններ տալու մասին» 09.11.2000թ-ի N 731, «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի վարձակալության, ինչպես նաև մինչև մեկ տարի ժամկետով պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի վարձակալության տրամադրման գործընթացը կանոնակարգելու մասին» 22.02.2001թ-ի N 125-Ն, «Պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված անշարժ գույքը մեկ տարվանից ավելի ժամկետով

վարձակալության տրամադրելու կարգը, մրցույթի և աճուրդի կազմակերպման ու անցկացման կարգը հաստատելու մասին» 03.10.2013թ-ի N 1106-Ն, «Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի անհատույց օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» 17.02.2011թ-ի N 304-Ն որոշումները և, պետության սեփականություն հանդիսացող տարածքների (պետական գույքի) վարձակալության գործընթացը միանման և արդյունավետ իրականացնելու նպատակով մշակել ու ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել ՀՀ կառավարության որոշման համապարփակ նախագիծ, որով միասնական սկզբունքներով կկարգավորվի պետական կառավարման համակարգի մարմինների, ՀՀ մարզպետարանների, ինչպես նաև դրանց ենթակա մարմինների, ՊՈԱԿ-ների, պետական հիմնարկների (ԾԻԳ-երի), 100 տոկոս պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց ամրացված տարածքների վարձակալությամբ և (կամ) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման գործընթացը, կսահմանվի այդ գործընթացում պետական գույքի կառավարման մարմնի դերը և լիազորությունները:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կառավարության 05.09.2019 թվականի N 1188-Ա որոշումն ուժը կորցրած է ճանաչվել մշտադիտարկման ընթացքում՝ ՀՀ կառավարության 27.05.2020 թվականի N 865-Ա որոշմամբ:

Մշտադիտարկման արդյունքում կազմված տեղեկանքը ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, ինչի արդյունքում պետական կառավարման մարմիններին տրվել են համապատասխան հանձնարարականներ:

Հաշվի առնելով հանրային հատվածում ծավալված քննարկումները՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայությունն իրականացրել է մշտադիտարկում ՀՀ վարչապետի 2019 հանձնարարականի հիման վրա՝ ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների կողմից ներքին աուդիտի արտապատվիրական եղանակով ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգերի նկատմամբ՝ վերջիններիս օրինականության և արդյունավետության գնահատման նպատակով: Արդյունքում, մի շարք դեպքերում արձանագրվել են, որ կազմակերպված գնման գործընթացների հրավերներում տեխնիկական բնութագրերը կազմված են եղել ոչ ամբողջական և հստակ, չեն նկարագրել ձեռք բերվող ծառայության հատկանիշները, հստակեցված չեն եղել աուդիտի ենթակա միավորների քանակը՝ պահանջվող ռեսուրսի և միջոցների գնահատում իրականացնելու նպատակով, ինչն առաջացրել է ոչ մրցակցային իրավիճակ: Ի հայտ եկած խդիրները քննարկվել են ոլորտի ներկայացուցիչների հետ: Նշվածի վերաբերյալ կազմվել է տեղեկանք և ներկայացվել ՀՀ վարչապետին: Համապատասխան մարմիններին հանձնարարվել է մեկամսյա ժամկետում ապահովել հայտարարված մրցույթների չեղարկումը և կնքված պայմանագրերի լուծումը, ինչպես նաև կազմակերպել նոր գնման ընթացակարգեր՝ նկատի ունենալով ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից արձանագրված դիտարկումները՝ գնման ընթացակարգերի տեխնիկական բնութագրերի վերաբերյալ: Արդյունքում ֆինանսների նախարարի 2020թ. հուլիսի 15-ի հրամանով հաստատվել է հանրային հատվածի ներքին աուդիտի ծառայության արտապատվիրական նպատակով կազմակերպված գնման ընթացակարգերում ներառվող տեխնիկական բնութագրին նվազագույն պահանջները և ՀՀ վարչապետի հանձնարարությամբ 2020թ. օգոստոսի 4-ի հանձնարարականով

հանրային հատվածի կազմակերպություններին առաջարկվել է մեկամսյա ժամկետում կազմակերպել և արդյունքների մասին տեղեկացնել վարչապետի աշխատակազմին ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նոր գործընթացի վերաբերյալ:

Ուսումնասիրվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի գրությունը, որի վերաբերյալ գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել ՀՀ պետական վերահսկողական ծառայության դիրքորոշումը ՍԱԾ ԳՀԾՁԲ-20/13 ծածկագրով՝ ներքին աուդիտի ծառայության գնման ընթացակարգի վերաբերյալ: Առաջակվել է առաջնորդվել ՀՀ վարչապետի կողմից տրված հանձնարարականով և տվյալ ընթացակարգը հայտարարել չկայացած՝ ելնելով նրանում առկա խտրական մի շարք չափորոշիչների առկայությունից:

Իրականացվել է մշտադիտարկում 2020 թվականի հունիսի 2-ին «[www.facebook.com](https://www.facebook.com/artak.tergrigoryan)» սոցիալական ցանցում՝ «[https://www.facebook.com/artak.tergrigoryan /videos/687388645378436/](https://www.facebook.com/artak.tergrigoryan/videos/687388645378436/)» հղմամբ տեսանյութի վերաբերյալ: ՀՀ պետական վերահսկողական ծառայության գլխավոր քարտուղարի գրությամբ պատասխանվել է քաղաքացի Արտակ Տեր-Գրիգորյանին: Արձանագրվել է, որ ներկայացված խնդիրները բարձրացնելու վերաբերյալ քաղաքացին չի ներկայացրել որևէ փաստաթղթավորված հարաբերություն Սևանի քաղաքապետարանի և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի հետ:

Իրականացվել է մշտադիտարկում քաղաքացի Արմեն Սարգսյանի («Մանկապատանեկան հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի նախկին տնօրեն 1992-2019թթ.) դիմումի հիման վրա, ըստ որի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) «Մանկապատանեկան հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ ՊՈԱԿ) նորանշանակ տնօրենը ծավալել է ոչ իրավաչափ գործունեություն: 2019 թվականի հուլիսի 25-31-ը ՊՈԱԿ-ը Լոռու մարզի Գարգառ գյուղի հարակից տարածքում պետք է իրականացներ «Իմ հայրենիքի զինվորն եմ» նշանաբանով հանրապետական ռազմահայրենասիրական վարժանք, որին պետք է մասնակցեր 310 երեխա, սակայն դիմումատուի խոսքերի համաձայն՝ մասնակցել է 35 երեխա (խմբավարներից շատերը աշխատում են համատեղության կարգով և չեն մասնակցել վարժանքին): ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը գրությամբ նախարարությունից պահանջել է ուսումնամարզական վարժանքների վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր Նախարարությունը ներկայացրել է պահանջվող տեղեկատվությունը: Փաստաթղթերի ուսումնասիրության ընթացքում ի հայտ են մի շարք խախտումներ՝ անհամապատասխանություններ: Արձանագրվել է, որ «Մանկապատանեկան հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2019 թվականի հուլիսի 25-31-ը իրականացրած «Իմ հայրենիքի զինվորն եմ» նշանաբանով հանրապետական ռազմահայրենասիրական վարժանքին նախահաշվով նախատեսված 310 մասնակցի փոխարեն փաստացի մասնակցել է 308 մասնակից, ինչպես նաև որոշ խմբեր մասնակցել են նախատեսված ոչ լրիվ գրաֆիկով, հետևաբար ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված սննդի գումարից 548 հազար դրամի ծախսը չի հիմնավորվել: Կազմված տեղեկանքն ուղարկվել ՀՀ դատախազություն: Այս պահին քննություն է ընթանում ՀՀ ոստիկանությունում: Տնօրենի կողմից չհիմնավորված ծախսի չափով գումարը վերականգնվել է ՊՈԱԿ-ի գանձապետական հաշվին:

Իրականացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականների կատարման գործընթացի վերաբերյալ մշտադիտարկում: Մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրվել են հանձնարարականների տրման, կատարման և կատարման նկատմամբ հսկողության իրականացման իրավական հիմքերը, իրականացվել է մշտադիտարկում ՀՀ վարչապետի կողմից 2019 թվականին տրված հանձնարարականների կատարման նկատմամբ: Մշտադիտարկումն իրականացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի «Mulberry» Էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի («Վերջնաժամկետներ»-«Հանձնարարականների վիճակագրություն») «Վարչապետի, փոխվարչապետի հանձնարարականներ» բաժնի ուսումնասիրության միջոցով: Բաժնում արտացոլվում են «Վարչապետի, փոխվարչապետի հանձնարարականները», որոնք տրվել են պետական կառավարման համակարգի մարմիններին: ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը մշտադիտարկում է իրականացրել 2019 թվականին թվով 44 պետական կառավարման մարմիններին (նախարարություններ, նախարարություններին ենթակա մարմիններ, կառավարությանը ենթակա մարմիններ, ՀՀ վարչապետին ենթակա մարմիններ) տրված հանձնարարականների կատարման նկատմամբ: Մշտադիտարկման արդյունքում կազմվել է տեղեկանք:

Իրականացվել է մշտադիտարկում ՀՀ պետական կառավարման համակարգի մարմինների և ՀՀ մարզպետարանների, ինչպես նաև ենթակա մարմինների, ՊՈԱԿ-ների, պետական հիմնարկների (ԾԻԳ-երի), պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց կողմից շահագործվող ծառայողական ու սպասարկող ավտոմեքենաների անհրաժեշտության վերաբերյալ:

Իրականացված աշխատանքների արդյունքում ՀՀ պետական վերահսկողական ծառայությունն առաջարկել է քննարկել պետական կառավարման մարմինների համար սահմանված ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակները այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանելու նպատակահարմարության հարցը:

Մշտադիտարկման արդյունքում կազմված տեղեկանք-գրությունը տրամադրվել է ՀՀ վարչապետի աշխատակազմին:

Իրականացվել է մշտադիտարկում «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացված տեղեկատվությամբ բարձրացված հարցի պարզաբանման՝ ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության կողմից ՄՏԻԲՆ-ԳԸԾՁԲ-18/1-1 պայմանագրով նախատեսված համապատասխան աշխատանքների ընդունման վերաբերյալ:

Կատարված մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ վերոնշյալ ընկերության կողմից ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացված տեղեկատվությամբ նշված ծրագիրը տեղադրված է ՀՀ վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության պահեստում գտնվող «Dell T630» մոդելի համակարգչային սերվերում:

Մշտադիտարկման արդյունքներն ամփոփվել են և համապատասխան տեղեկանք-գրությունը տրամադրվել է ՀՀ վարչապետի աշխատակազմին:

ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված տնտեսվարողների կողմից գնման գործընթացներում ունեցած մասնակցության բացահայտման նպատակով իրականացված մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ տեղեկանքը:

ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՝ ՀՀ օրենքի նախագծի (որդեգրումների մասով) վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

«Ներքին առևտրի որակի արտաքին գնահատման ձեռնարկը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի նախագծի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների ներկայացում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների կատարման գործընթացի շրջանակներում առաջարկությունների տրամադրում:

«Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի N 808-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի վերաբերյալ առաջարկության մշակում:

(Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը եվ գործունեության կարգը, խորհրդի կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի եվ ռոտացիայի կարգը հաստատելու եվ հայաստանի հանրապետության վարչապետի 2015 թվականի ապրիլի 18-ի n 300-և որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին)

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի և ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված «Ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի N 1008-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկությունների տրամադրում:

ՀՀ ֆինանսների նախարարության www.gnumner.am պաշտոնական կայքում հրապարակված գնման ընթացակարգերի հրավերների դիտարկման արդյունքում թվով 37 կազմակերպությունների հրավերի փոփոխության առաջարկությունների ներկայացում:

Ներքոհիշյալ օրենքների և այլ իրավական ակտերի վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում

- «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծեր,
- «Օրենսդրական ակտի և կառավարության որոշման վերաբերյալ պաշտոնական պարզաբանում տվող պետական կառավարման համակարգի մարմինների և համապատասխան բնագավառներ ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ,
- ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացված՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում ներառված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1835-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2020-2023թթ. միջոցառումների ծրագրի վերաբերյալ ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը դիրքորոշման ներկայացում:

ՀՀ կառավարության 2017 թվականի մասիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգում հայտնաբերված անհամապատասխանության վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարություն Է առաջարկության ներկայացում:

հանրային հատվածի ներքին աուդիտի ծառայությունների արտապատվիրակման նպատակով կազմակերպվելիք գնման գործընթացների գնման հայտում ներառվող բնութագրին ներկայացվող պահանջների վերաբերյալ դիրքորոշման ներկայացում ՀՀ ֆինանսների նախարարությանը:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

ՀՀ կառավարության «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը հավանության տալու մասին» որոշում, ՀՀ թվայնացման ռազմավարության նախագծերի վերաբերյալ առաջարկների տրամադրում:

ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

o ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից ՀՀ ոստիկանությունում իրականացրած ուսումնասիրությունների արդյունքներով արձանագրված խտրական գնման գործընթացների բացառման, միջակցային իրավահարաբերությունների ապահովման արդյունքում՝ ՀՀ ոստիկանության կողմից 2020 թվականի կարիքների համար կազմակերպված մի շարք ապրանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով իրականացված գնման գործընթացներում տևտեսվել են խոշոր դրամական միջոցներ:

ՀՀ ոստիկանության կողմից Ծառայությանը տրամադրված տեղեկատվության համաձայն վերոնշյալ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման ուղղությամբ խնայողությունները կազմել են՝

— 2020 թվականի համար միջնաժամկետ ծախսային ծրագրով հաստատված նշված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով նախատեսված ֆինանսական միջոցների նկատմամբ՝ 956,272 (ինը հարյուր հիսունվեց միլիոն երկու հարյուր յոթանասուն երկու) հազար ՀՀ դրամ,

-2020 թվականի համար նշված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգերում հայտերով ներկայացված նախահաշվային գների նկատմամբ՝ 505,132 (հինգ հարյուր հինգ միլիոն հարյուր երեսուներկու) հազար ՀՀ դրամ:

Միաժամանակ, հայտնում ենք, որ ՀՀ ոստիկանությունում խնայողություններն ունեն ավելանալու միտում:

- ՀՀ Պետական վերահսկողական ծառայության կողմից ՀՀ ոստիկանությունում 2019 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին իրականացված ուսումնասիրության շրջանակներում պարզվել էր, որ ՀՀ ոստիկանության պետի հրամանով 2019 թվականի սեպտեմբերին «Երեխայի զարգացման կենտրոն» ՊՈԱԿ-ը (Ոստիկանության մանկապարտեզը) ենթակա է լուծարման: Ուսումնասիրության ժամանակահատվածում մանկապարտեզ էին հաճախում ՀՀ ոստիկանության աշխատակիցների ավելի քան 90 երեխա: Ուսումնասիրության հետագա աշխատանքների ընթացքում պարզվել էր նաև, որ համաձայն ՀՀ ոստիկանության և «Ավագ Շին» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրերի՝ «Ավագ Շին» ՍՊԸ-ն ՀՀ ոստիկանության մանկապարտեզի գույքի և հողի դիմաց պետք է մինչ 19.05.2018թ-ը նույն հասցեում կառուցված բազմաֆունկցիոնալ բնակելի շենքից որոշակի տարածք սեփականության իրավունքով հատկացներ մանկապարտեզին, ինչը սակայն տեղի չէր ունեցել: ՀՀ ՊՎԾ և ՀՀ ոստիկանության կողմից իրականացված աշխատանքների արդյունքում ՀՀ վարչապետի հանձնարարականով կասեցվել է մանկապարտեզի լուծարումը, իսկ «Ավագ Շին» ՍՊԸ-ն պարտավորվել է մանկապարտեզին սեփականության իրավունքով հատկացնել 401,2 մ2 ընդհանուր մակերեսով մանկապարտեզի շենքին հարակից լրացուցիչ հողատարածք՝ որպես երեխաների համար խաղահրապարակ: Վերոնշյալը ամրագրված է ՀՀ

կառավարության 07.05.2020թ-ի N 721-Ա որոշմամբ: Ներկայումս
մանկապարտեզը շարունակում է իր բնականոն գործունեությունը և
մանկապարտեզ են հաճախում ՀՀ ոստիկանության զոհված և
սոցիալապես անապահով աշխատակիցների ընտանիքների բազմաթիվ
երեխաներ:

ՀՀ պետական վերահսկողական ծառայություն